Հուսիկ Արա

Դիվապետ

Մի ուրուր է անցնում
մեր լեռների պարով.
Վահագնի հետ է շփոթել իրեն,
նստել է փայտե ձի չներկած,
կարծում է՝ վիշապ է հեծնել:

Քշում է Գալ-ուսին,
ոչ այն վեհությամբ,
ինչպես վայել էր Կեսարին.
ոտքերի արանքում վրնջում է մի բան,
որ նման չէ ձիուն Հուլիոսի.
մի քոսոտ յաբու է՝ սմբակ ու հեծան,
անունը Շեռ-Մեզ:

Մի տրցակ այլայլ ոգիներ
կարգել են իրենց սև խնջույքին պետ սույն դևին.
այդ գիշերն է թթվել մեր աշխարհում հիմա՝
մի նոր Ներոն ու դիվապետ:

Ամֆիթատրոնն է շրջել բութ մատը ներքև,
իսկ այդ ընկածը վստահ է,
թե պար են բռնել շուրջը վերնուղեշ:

Մի սև՝ առանց թևեր,
անցնում է մեր լեռների պարով՝
հեծած փայտե ձի,
ինչպես դև՝ դուրս պրծած հեքիաթներից: